ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2026 թվականի N 1637 - Ա

ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով, 1994 թվականի հունիսի 30-ի «Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ հոդվածի 3-րդ կետերի դրույթներով, ինչպես նաև Սևծովյան առևտրի և զարգացման բանկի Կառավարիչների խորհրդի 2024 թվականի մայիսի 21-ի թիվ 220 որոշման պայմաններով և դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ Սևծովյան առևտրի և զարգացման բանկի կանոնադրական կապիտալի համալրման շրջանակներում Հայաստանի Հանրապետության բաժանորդագրությանը:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ապահովել Սևծովյան առևտրի և զարգացման բանկի կանոնադրական կապիտալի համալրման շրջանակներում Հայաստանի Հանրապետության կապիտալի համալրման վճարումը՝

այն կատարելով մուրհակ տրամադրելու եղանակով՝ համաձայնեցնելով Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

12.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ